

7-8 դասարաններ

1. Դասարանում կա 9 տղա և 13 աղջիկ: Այդ դասարանի աշակերտների կեսը մրսած են: Աղջիկներից առնվազն քանի՞սն են մրսած:

(A) 0 (B) 1 (C) 2 (D) 3 (E) 4:

2. 6 կենգուրու 6 պարկ խոտն ուտում են 6 րոպեում: 100 րոպեում 100 պարկ խոտը քանի՞ կենգուրու կուտի:

(A) 100 (B) 60 (C) 6 (D) 10 (E) 600

3. 2, 3, և 4 թվերը և նա մեկ անհայտ թիվ գրված են 2×2 աղյուսակի վանդակներում: Հայտնի է, որ առաջին տողում գրված թվերինը՝ 6: Անհայտ թիվը հավասար է՝

(A) 5 (B) 6 (C) 7 (D) 8 (E) 4:

4. Եռանկյան և քառակուսու պարագծերն իրար հավասար են: Քառակուսու կողմը 4սմ է: Ինչի՞ է հավասար ընդհանուր պատկերի հնգանկյան պարագիծը:




(A) 12 սմ (B) 24 սմ (C) 28 սմ (D) 32 սմ (E) կախված է եռանկյան չափերից:

5. Ծաղկավաճառի մոտ մնացել է 24 սպիտակ, 42 կարմիր և 36 դեղին վարդ:

Առավելագույնը քանի՞ միանման ծաղկեփունջ կարող է նա պատրաստել, եթե ուզում է օգտագործել բոլոր ծաղիկները:

(A) 4 (B) 6 (C) 8 (D) 10 (E) 12

6. Երեք գիծ հատվում են մի կետում: Նկարում տրված են երկու անկյունների արժեքները: Քանի՞ աստիճան է $\angle AOB$:



(A) 52° (B) 53° (C) 54° (D) 55° (E) 56°

7. Ֆրանսիացի մաթեմատիկոս Օգյուստ դե Մորգանը ասում էր, որ նա եղել է x տարեկան x^2 թվականին: Հայտնի է, որ նա մահացել է 1899թ-ին: Ե՞րբ է նա ծնվել:

(A) 1806 (B) 1848 (C) 1849 (D) 1899 (E) այլ պատասխան:

8. A, B, C և D կետերը նշված են ուղիղ գծի վրա ինչ-որ հաջորդականությամբ:
Հայտնի է, որ $AB=13$, $BC=11$, $CD=14$ և $DA=12$: Որքա՞ն է ծայրակետների միջև եղած հեռավորությունը:

(A) 14 (B) 38 (C) 50 (D) 25 (E) այլ պատասխան

9. ABC հավասարասրուն եռանկյան C գագաթի CD անկյան կիսորդը հավասար է BC հիմքին:

Այդ դեպքում CDA անկյունը հավասար է՝

(A) 90° (B) 100° (C) 108° (D) 120° (E) անհնար է որոշել

10. Վերելակը կարող է բարձրացնել 12 մեծահասակի կամ 20 երեխայի:

Առավելագույնը քանի՞ երեխա կարող է բարձրանալ 9 մեծահասակի հետ:

(A) 3 (B) 4 (C) 5 (D) 6 (E) 8:

Մաթեմատիկայի ամառային հանձնարարություններ

5-6 դասարաններ

1. Ո՞րն է ամենափոքրը

- (A) $2+0+0+8$ (B) $\frac{200}{8}$ (C) $2 \times 0 \times 0 \times 8$ (D) $200-8$ (E) $8+0+0-2$

2. Դավիթը բազմապատկում է 3-ով, Սարգիսը գումարում է 2, իսկ Վարդանը հանում է 1: Ի՞նչ հերթականությամբ կարող են նրանք կատարել այդ գործողությունները 3 թվից 14 թիվը ստանալու համար:

- (A) Դավիթ, Սարգիս, Վարդան (B) Սարգիս, Դավիթ, Վարդան
(C) Դավիթ, Վարդան, Սարգիս (D) Վարդան, Դավիթ, Սարգիս
(E) Սարգիս, Վարդան, Դավիթ

3. Որպեսզի $1+1*1-2=100$ հավասարումը լինի ճիշտ հարկավոր է * փոխարինել հետևյալով՝

- (A)+ (B)- (C) x (D)0 (E) 1

4. 2,3 և 4 թվերը և ևս մեկ անհայտ թիվ գրված են 2×2 աղյուսակի

վանդակներում: Հայտնի է, որ առաջին տողում գրված թվերի գումարը 9 է, երկրորդ տողում գրված թվերինը՝ 6: Անհայտ թիվը հավասար է՝

- (A)5 (B)6 (C) 7 (D) 8 (E) 4

4. Պետրոսը պատրաստել էր մի քանի ձնագնդիկ մինչև խաղը սկսելը: Խաղի ընթացքում նա պատրաստեց ևս 17 ձնագնդիկ, իսկ մյուս տղաների վրա շաքուղեց 21 ձնագնդիկ: Խաղից հետո նրա մոտ մնաց 15 ձնագնդիկ: Քանի ձնագնդիկ էր պատրաստել Պետրոսը խաղից առաջ:

- (A)53 (B)33 (C) 23 (D)19 (E)18

6. Քանի՞ հատ միանման լուցկու հատիկներով հնարավոր չէ եռանկյուն կառուցել (լուցկու հատիկները կոտրել չի կարելի):

- (A)7 (B)6 (C)5 (D)4 (E) 3

7. Եռանկյան և քառակուսու պարագծերն իրար հավասար են :

Քառակուսու կողմը 4սմ է: Ինչի՞ է հավասար ընդհանուր պատկերի հնգանկյան պարագիծը:

- (A) 12 սմ (B) 24 սմ (C) 28սմ (D) 32սմ (E) կախված է եռանկյան չափերից:



8. Կլոր սեղանի շուրջ դրված է 60 աթոռ: n քանակով մարդիկ նստած են սեղանի շուրջն այնպես, որ նրանցից յուրաքանչյուրը ինչ-որ մեկի հարևանն է: n -ի հնարավոր արժեքներից նվազագույնն է՝

(A) 40 (B) 30 (C) 20 (D) 10 (E) նախորդներից ոչ մեկը

9. A դրական ամբողջ թվի մասին կա 4 պնդում.

1) A-ն բաժանվում է 5-ի

2) A-ն բաժանվում է 11-ի

3) A-ն բաժանվում է 55-ի:

4) A-ն 10-ից փոքր թիվ է

Հայտնի է, որ այդ պնդումներից երկուսը ճիշտ են, իսկ երկուսը՝ սխալ: Այդ դեպքում A-ն հավասար է

(A) 0 (B) 5 (C) 10 (D) 11 (E) 55

10. Կարինեն ուզում էր շարել իր բոլոր CD-ները մեկ դարակի վրա, բայց դրանց մեկ երրորդը չտեղավորվեց: Դարակում չտեղավորված CD-ները նա շարեց տուփերում, որոնցից յուրաքանչյուրի մեջ դրեց յոթական CD: Սակայն մնաց ևս 2 CD, որոնք նա դրեց սեղանի վրա: Քանի՞ CD ուներ Կարինեն:

(A) 23 (B) 21 (C) 65 (D) 69 (E) 46